

**«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆԻ ԱԾԽԱՏԱԿԱԿԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ  
ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՄԵՆՅԱԿԱՅԻՆ  
ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՀՀ-ԼՄՍՀ-ՄԱԱՊԶԲ-25/02**

h. Ստեփանավան

«20» փետրվարի 2025 թ.

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկը, ի դեմս համայնքի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Ա/Ձ Արարատ Դոխոյան, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## **1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## **2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

### **2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը:

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը:

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից:

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն Եականորեն խախտել է պայմանագիրը:

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն Եական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Չննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

### **2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, պահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լինի՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

### 2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Քննողից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Քննողից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Քննողի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Քննողն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Քննողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Քննողի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

### 2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Քննողին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Քննողի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Քննողին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Քննողին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Քննողի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Քննողի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Քննողին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Քննողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Քննողին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **974180 (Ինը հարյուր յոթանասուներեք հազար հարյուր ութսուն) ՀՀ դրամ**: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Քննողը նվազեցնելու այդ գինը:

3.2 Քննողն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Քննողը վճարման հանձնարարագիրը և հանձման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում<sup>17</sup>:

#### 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

#### 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 1 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:<sup>20</sup> Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լիով կատարելուց:

#### 7. ԱՆՀԱՂԱԹԱՅԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՇԽԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

#### 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության:

մանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նախապայմաններով գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում վնասների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը կնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:<sup>2</sup>

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ լքելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

### ԳՆՈՐԴ

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի  
Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ»  
համայնքային կառավարչական հիմնարկ  
հ.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/2/ 1  
ՀՀ Ֆինանսների նախարարության  
գործառնական վարչություն  
h/h900252131025  
h/h900252101341 (ԶԿԱԳ-ի դեպքում)  
ՀՎՀՀ 06954104

(ստորագրություն) Կ.Տ

### ՎԱՃԱՌՈՂ

Ա/Ձ Արարատ Դիմիտրյան  
ք.Ստեփանավան, Վիրահայոց 80/11  
«Արդշինբանկ» ՓԲԸ Ստեփանավանի մ/ճ  
h/h2471403035270000  
ՀՎՀՀ 67033518

(ստորագրություն)/  
Կ.Տ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - զԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*


ՀՀ դրամ

| Սպորանցի                                                                  |                                                                                                   |                     |                                                                                         |                          |                     |                           |                                           |                        |                                                                                                                         |
|---------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------|---------------------|-----------------------------------------------------------------------------------------|--------------------------|---------------------|---------------------------|-------------------------------------------|------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| հրավերի<br>նախնական<br>առաջարկի<br>վաճառքի<br>արժեքի<br>համար<br>ընդամենը | գնումներ<br>ի<br>այսու<br>նախնական<br>առաջարկի<br>վաճառքի<br>արժեքի<br>համար<br>ընդամենը<br>(CPV) | անվանում            | ապրանքային<br>նշանը,<br>ֆիրմային<br>անվանումը,<br>մոդելը և<br>արտադրողի<br>անվանումը ** | տեխնիկական<br>բնութագիրը | չափերի<br>միավորը   | միավոր<br>գինը/ՀՀ<br>դրամ | ընդամեն<br>ը գինը/ՀՀ<br>դրամ              | ընդամեն<br>ը<br>քանակը | մատակարարման                                                                                                            |
| Տես<br>ները<br>նում                                                       | Տես<br>ները<br>նում                                                                               | Տես<br>ները<br>նում | Տես<br>ները<br>նում                                                                     | Տես<br>ները<br>նում      | Տես<br>ները<br>նում | Տես<br>ները<br>նում       | Տես<br>ները<br>նում                       | Տես<br>ները<br>նում    | Տես<br>ները<br>նում                                                                                                     |
|                                                                           |                                                                                                   |                     |                                                                                         |                          |                     |                           | հ.<br>Ստեփանավա<br>ն Ս.Սարգսյան<br>փ/2/ 1 |                        | ժամկետը***<br><br>Ապրանքների<br>ծեղման<br>վերջնական<br>պայմանագրի<br>կնքման օրվանից<br>մինչև 2025թ.<br>դեկտեմբերի 30-ը: |

| Հափ արա փին երի ամար | (CPV)    | Ապրանքի անվանումը                  | Տեխնիկական բնութագիրը                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                              | Հափման միավորը | Ընդհանուր քանակը | Միավոր գինը /ՀՀ դրամ | Ընդհանուր գինը/ՀՀ դրամ |
|----------------------|----------|------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------|------------------|----------------------|------------------------|
| 1                    | 30192739 | Թուղթ /A4 ֆորմատի (21x29.7)        | A4 ձևաչափի (210x297)մմ առանց շերտման, չկազմած թուղթ, A դասի նախատեսված լազերային, շիթային և պատճենահանող սարքերով տպագրելու (լամա երկվորյակի և գունավոր տպագրության) համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, խտությունը՝ 80-82 g/m <sup>2</sup> , ալիտակությունը՝ առնվազն՝ 171% CIE համակարգով, հատությունը՝ 109 մկմ 4/4%, անթափանցելիությունը՝ 92%-ից ոչ պակաս, պայծառությունը՝ առնվազն 100%: Հորձարանային փայլեթափումով, յուղաքսնյուր տուփում 500 թերթ- 2.5 կլորդրամ: Ապրանքները պետք է մատակարարվեն ըստ պակիրատուի պահանջի: Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը պետությունում պետությունում, բեռնաթափումը՝ բանկրդական ուժով կատարվում է մատակարարի կողմից: | տուփ           | 280              | 2000                 | 560000                 |
| 2                    | 30197231 | Թղթապամակ պոլիմերային թաղանթ, ֆայլ | Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակալների արագներու հնարավորություն (հաստությունը 25-40 մկրդ): Ապրանքները պետք է մատակարարվեն ըստ պակիրատուի պահանջի: Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը պետությունում պետությունում, բեռնաթափումը՝ բանկրդական ուժով կատարվում է մատակարարի կողմից:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                    | հատ            | 3600             | 10                   | 36000                  |
| 3                    | 30197232 | Թղթապամակ / արագակալ, թղթյա        | Արագակալ կազմած տպագրություն, մետաղական ամրակով, A4 210x297 մմ ձևաչափի թղթերի համար: Ապրանքները պետք է մատակարարվեն ըստ պակիրատուի պահանջի: Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը պետությունում պետությունում, բեռնաթափումը՝ բանկրդական ուժով կատարվում է մատակարարի կողմից:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                       | հատ            | 160              | 70                   | 11200                  |
| 4                    | 30197234 | Թղթապամակ / թղթապամակ կոշտ կազմով  | Թղթապամակ կոշտ տպագրություն կազմով, համապատասխան չափի կոշտակով (ծավալով), մետաղյա ամրակման հարկարանով, A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար: Ապրանքները պետք է մատակարարվեն ըստ պակիրատուի պահանջի: Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը պետությունում պետությունում, բեռնաթափումը՝ բանկրդական ուժով կատարվում է մատակարարի կողմից:                                                                                                                                                                                                                                                                                                                                               | հատ            | 90               | 650                  | 58500                  |
| 5                    | 30197235 | Թղթապամակ՝ ամրակով                 | Թափանցիկ թղթապամակ նախատեսված A4 ֆորմատի թղթերի համար: Ապրանքները պետք է մատակարարվեն ըստ պակիրատուի պահանջի: Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը պետությունում պետությունում, բեռնաթափումը՝ բանկրդական ուժով կատարվում է մատակարարի կողմից:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                     | հատ            | 60               | 200                  | 12000                  |
| 6                    | 30192121 | Գրիչ / գրիկակալ                    | Գրիկակալ, 0.5 մմ կամ 0.7 մմ /ըստ պակիրատուի պահանջի/, իրանը և փակնը պատմասե, գրիչը բանելու համար նախատեսված հատվածում փափուկ, ծալքավոր ռետինե ժապավենի առկայությամբ: Գրի ժամանակ թանաքի հոսքը՝ անընդհատ: Գրիչի միջուկի թանաքի մակարակը՝ տեսանելի: Ըստ պակիրատուի /սև, կապույտ/ Cello Finegrip կամ համարժեքը: Ապրանքները պետք է մատակարարվեն ըստ պակիրատուի պահանջի: Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը պետությունում պետությունում, բեռնաթափումը՝ բանկրդական ուժով կատարվում է մատակարարի կողմից:                                                                                                                                                                               | հատ            | 350              | 50                   | 17500                  |
| 7                    | 30192128 | Գրիչ / գրեյպին                     | Գրիչ, 0.5 մմ ծայրով, տարբեր գույների, (գեյ): Ապրանքները պետք է մատակարարվեն ըստ պակիրատուի պահանջի: Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը պետությունում պետությունում, բեռնաթափումը՝ բանկրդական ուժով կատարվում է մատակարարի կողմից:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                               | հատ            | 40               | 130                  | 5200                   |
| 8                    | 30199400 | Թուղթ նշումների համար/ ստանդարտ    | Թուղթ գրելու, ստանդարտը 1.25 մմ-ից ոչ պակաս, թելին, չափը՝ 90մմx90մմ: Ապրանքները պետք է մատակարարվեն ըստ պակիրատուի պահանջի: Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը պետությունում պետությունում, բեռնաթափումը՝ բանկրդական ուժով կատարվում է մատակարարի կողմից:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                       | հատ            | 60               | 180                  | 10800                  |
| 9                    | 39263200 | Գրասենյակային գիրք, մատյան         | Համապատասխան ձևաչափերի և տարբեր չափերի: (70 - 200) էջ, տողանի, սպիտակ էջերով: Ապրանքները պետք է մատակարարվեն ըստ պակիրատուի                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                        | հատ            | 15               | 700                  | 10500                  |

[illegible]

|    |          |                      |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                          |     |     |      |       |
|----|----------|----------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----|-----|------|-------|
| 28 | 30234400 | DVD դիսկ             | Դատարկ սկավարակ առանց տուփի, DVD DVD-RW :Ապրանքները պետք է մատակարարվեն ըստ պակիրատուի պահանջի: Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը պետք է լինի ակտորանսպորտով, բեռնաթափումը՝ բանկրոտական ուժով կատարվում է մատակարարի կողմից: Ապրանք (Էլեմենտ՝ մեծ) Տարբեր գույների, 1.5 V AA տեսակի:                                                                                                                                                                 | հատ | 10  | 140  | 1400  |
| 29 | 31442000 | Ապրանք՝ 1.5V AA      |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                       | հատ | 40  | 80   | 3200  |
| 30 | 31441000 | Ապրանք՝ 1.5V AAA     | Ապրանքները պետք է մատակարարվեն ըստ պակիրատուի պահանջի: Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը պետք է լինի ակտորանսպորտով, բեռնաթափումը՝ բանկրոտական ուժով կատարվում է մատակարարի կողմից: Ապրանք (Էլեմենտ՝ մեծ) Տարբեր գույների, 1.5 V AAA տեսակի: Ապրանքները պետք է մատակարարվեն ըստ պակիրատուի պահանջի: Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը պետք է լինի ակտորանսպորտով, բեռնաթափումը՝ բանկրոտական ուժով կատարվում է մատակարարի կողմից: | հատ | 30  | 80   | 2400  |
| 31 | 35821400 | Դրոշմիչ / 0.75*1.5/  | Նմուշ 1՝ 20 արկան բարձր որակի կտորից եզերի կարը երեք 2երտ Ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված: Ապրանքները պետք է մատակարարվեն պակիրատուի կողմից պահանջ ներկայացնելուց 3 օրացուցային օրվա ընթացքում: Ապրանքի տեղափոխումը պետք է լինի ակտորանսպորտով, բեռնաթափումը՝ բանկրոտական ուժով կատարվում է մատակարարի կողմից:                                                                                                                                                 | հատ | 30  | 1700 | 51000 |
| 32 | 35821400 | Դրոշմ մեծ/1*2/       | Նմուշ 2՝ 10 արկան բարձր որակի կտորից եզերի կարը երեք 2երտ Ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված: Ապրանքները պետք է մատակարարվեն պակիրատուի կողմից պահանջ ներկայացնելուց 3 օրացուցային օրվա ընթացքում: Ապրանքի տեղափոխումը պետք է լինի ակտորանսպորտով, բեռնաթափումը՝ բանկրոտական ուժով կատարվում է մատակարարի կողմից:                                                                                                                                                 | հատ | 10  | 2200 | 22000 |
| 33 | 30199232 | Ծրար / A4/32.5*22.5/ | Ծրար՝ A4 (32.5*22.5) ձևաչափի, 90% պպիտակություն, 100գ/մ2 զանգվածով N1 օժտեցված թղթից, ներ հատվածից բացվող, ինքնատեղադրվող: Ապրանքները պետք է մատակարարվեն ըստ պակիրատուի պահանջի: Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը պետք է լինի ակտորանսպորտով, բեռնաթափումը՝ բանկրոտական ուժով կատարվում է մատակարարի կողմից:                                                                                                                                       | հատ | 150 | 40   | 6000  |
| 34 | 30199230 | Ծրար / A5/25.5*17.5/ | Ծրար՝ A5 ձևաչափի թղթերի համար, չափերը՝ 25.5*17.5 (շերտը +- 2%), պպիտակությունը առնվազն 90%, 102 մակերեսը առնվազն 80գ զանգվածով, անբեռնված և ուղիղ կախված, ինքնատեղադրվող: Ապրանքները պետք է մատակարարվեն ըստ պակիրատուի պահանջի: Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը պետք է լինի ակտորանսպորտով, բեռնաթափումը՝ բանկրոտական ուժով կատարվում է մատակարարի կողմից:                                                                                        | հատ | 150 | 30   | 4500  |
| 35 | 30199290 | Ծրար /22.5*11.5/     | Ծրար՝ 22.5*11.5 (շերտը +-1%) չափերով , պպիտակությունը առնվազն 90%, 102 մակերեսը առնվազն 80գ զանգվածով, անբեռնված և ուղիղ կախված, ինքնատեղադրվող: Ապրանքները պետք է մատակարարվեն ըստ պակիրատուի պահանջի: Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը պետք է լինի ակտորանսպորտով, բեռնաթափումը՝ բանկրոտական ուժով կատարվում է մատակարարի կողմից:                                                                                                                 | հատ | 500 | 20   | 10000 |
| 36 | 30192720 | Գծանշիչ              | Տարբեր գույնի (առնվազն 5 գույն)՝ գնդիկի հետ համապատասխան բանալիներով, անբեռնված ընդգծումներ, նշումներ անելու համար, ֆեռից կամ այլ ծակալուսն կուրծից տափակ ծայրով: Պարտադիր պայման՝ ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը պետք է լինի ակտորանսպորտով, բեռնաթափումը՝ բանկրոտական ուժով կատարվում է մատակարարի կողմից:                                                                                                                                      | հատ | 15  | 200  | 3000  |
| 37 | 39263310 | Օրացույց, սերուսի    | Օրացույց 2024թ. սերունի նշումների համար, տղերով, թերթիկով, պատկերային վրա ամրանալու անցքով գույնավոր տպագրությամբ, տպագրված ամսաթվերով մեծ տեսանելի: Թուղթ օժտեցված /13.5x9.5/ սմ ձևաչափի 70 գր զանգվածով:                                                                                                                                                                                                                                                               | հատ | 20  | 650  | 13000 |

|                   |          |                                   |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                          |     |    |      |               |
|-------------------|----------|-----------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----|----|------|---------------|
| 38                | 30234620 | Ֆիշ ԻՆՅՈՐԻՔՅՈՒՆ                   | Ֆիշ ԻՆՅՈՐԻՔՅՈՒՆ, 4GB չօգտագործված: Պարտադիր պայման՝ ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը ակտորանսագրությամբ, բեռնաթափումը՝ բանկիրական ուժով կատարվում է մատակարարի կողմից:<br>Կրշտ կազմով Նոթատետր-չափից՝ 148x210/մմ                                                                                                                                                                                                                                                                                    | հատ | 5  | 2500 | 12500         |
| 39                | 22811150 | Նոթատետր կրշտ կազմով              | Խոլեր բարձրորակ, թեթեւի բանակը՝ 52: Պարտադիր պայման՝ ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը ակտորանսագրությամբ, բեռնաթափումը՝ բանկիրական ուժով կատարվում է մատակարարի կողմից:                                                                                                                                                                                                                                                                                                                             | հատ | 15 | 1100 | 16500         |
| 40                | 22811150 | Նոթատետր հաաարակ                  | Հասարակ Նոթատետր-չափից՝ 127x203/մմ, թուղթ բարձրորակ, թեթեւի բանակը՝ 70 կազմով ամրամուկ է սիլոկին մետաղական գալարներով: Պարտադիր պայման՝ ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը ակտորանսագրությամբ, բեռնաթափումը՝ բանկիրական ուժով կատարվում է մատակարարի կողմից:                                                                                                                                                                                                                                          | հատ | 20 | 250  | 5000          |
|                   |          | <b>ԸՆԴՀԱՆՈՒՐ</b>                  |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                          |     |    |      | <b>938040</b> |
| <b>ԲԵՐՈՒՄԻՆԻՍ</b> |          |                                   |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                          |     |    |      |               |
| 1/6               | 30192121 | Գրիչ / գրիկավոր                   | Գրիկավոր, 0.5 մմ կամ 0.7 մմ /ըստ պատվիրատուի պահանջի/, իրանը և փափանց պատմաման, գրիչը բռնելու համար նախատեսված հատվածում փափուկ, ծալքավոր ռետինե ժապավենի առկայությամբ: Գրի ժամանակ թանաքի հոսքը՝ անընդհատ: Գրիկի միջուկի թանաքի մակարդակը՝ տեսանելի: Ըստ պատվիրատուի /և/, կարմիր, կապույտ/ Cello Finegrip կամ համարժեքը: Ապրանքները պետք է մատակարարվեն ըստ պակիրատուի պահանջի: Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը ակտորանսագրությամբ, բեռնաթափումը՝ բանկիրական ուժով կատարվում է մատակարարի կողմից: | հատ | 16 | 50   | 800           |
| 2/7               | 30192128 | Գրիչ / գեպին                      | Գրիչ, 0.5 մմ ծալքով, տարբեր գույների, (գեպ): Ապրանքները պետք է լինի մատակարարվեն ըստ պակիրատուի պահանջի: Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը ակտորանսագրությամբ, բեռնաթափումը՝ բանկիրական ուժով կատարվում է մատակարարի կողմից:                                                                                                                                                                                                                                                                         | հատ | 15 | 130  | 1950          |
